Արձանագրություն N 2

«ՀՀ ՏՋՆՆ-ԳՀԾՁԲ-17/5» ծածկագրով ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի
(Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ)

ք. Երևան

27 հունիսի 2017թ.
ժամը՝ 09:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի

նախագահ՝ Ա.Գրիգորյան

քարտուղար՝ Վ. Պապիկյան

անդամներ՝ Ա.Մկրտչյան, Գ.Սիմոնյան, Վ.Ապրեսյան, Գ.Ալոյան

1. ԳՀ ընթացակարգի հայտերի բացման մասին

1. Ընդունել ի գիտություն, որ՝

ա. Ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մրցույթին մասնակցելու հրավերը հրապարակվել է <gnumner.am> կայքի գնանշման հարցում կատարելու կատարելու ընթացակարգ հայտարարություններ բաժնում, ինչպես նաև <www.armeps.am> էլեկտրոնային կայքում:

բ. գնային առաջարկը բացվել է 2017 թվականի հունիսի 27-ին՝ ժամը 09:00-ին <www.armeps.am> էլեկտրոնային կայքի միջոցով:

գ. <www.armeps.am> էլեկտրոնային կայքում հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

Հ/հ	Մասնակցի անվանումը	Մասնակցի գտնվելու վայրը
1.	«Գարանտսերվիս»ՍՊԸ	ք.Երևան, Թբիլիսյան խճ. 20, հեռ. 010285447

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

2. Տվյալներ հայտերի կազմման և ներկայացման հրավերի պահանջներին համապատասխանության մասին

2.1 Մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա է հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

4. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

4.1 Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

5. Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի վերաբերյալ

5.1 Մասնակցի գնային առաջարկը հետևյալն է՝

N չափաբաժին	Ծառայության անվանումը	ՀՀ պետ. բյուջեով նախատեսված գինը	«Գարանսերվիս»ՍՊԸ	
			Առանց ԱԱՀ-ի	ԱԱՀ-ն ներառյալ
1	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ	300 000	4 012 083.33	4 814 500
2	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ	300 000	4 425 916.67	5 311 100

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետը՝ միակ մասնակից **«Գարանտսերվիս»ՍՊԸ-ի** հետ, որը ներկա էր բացման նիստին, վարվեցին միաժամանակյա բանակցություններ գնային առաջարկի նվազեցման շուրջ, որի արդյունքում մասնակցի գինը մնաց անփոփոխ:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

6 Տվյալներ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ

6.1 Հիմք ընդունելով միակ մասնակցի կողմից ներկայացրած գնային առաջարկը՝ հանձնաժողովը ***որոշեց՝***

ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «Գարանսերվիս» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5 , դեմ-0

6.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրն էլեկտրոնային եղանակով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացնելու 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը որից հետո սահմանված կարգով հանձնաժողովի անդամներին կտրամադրվի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը, գնահատման թերթիկները և հարկային պարտավորությունների մասին եզրակացությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5 , դեմ-0

7. Տեղեկատվություն հայտերի հարցումների և պատասխանների վերաբերյալ

Հարցումներ չեն ստացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

8. <u>Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի վերաբերյալ</u>

Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա ք.Երևան,Մ.Մկրտչյան 5, 910 սենյակ հասցեում, սույն արձանագրության 6-րդ կետի 6.2 կետով սահմանված փաստաթղթերի ներկայացման ժամկետի ավարտից հետո:

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Ա.Գրիգորյան

քարտուղար՝ _____ Վ. Պապիկյան

անդամներ՝ _____ Ա.Մկրտչյան

_____ Գ.Սիմոնյան

_____ Գ.Ալոյան

_____ Վ.Ապրեսյան